ԱՓ 08/02-04

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒԹՂ

ԳՆԱՁՈՎԱՑՈՒՄԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Հեղինակներ՝

Արթուր Նախշիկյան և Անահիտ Թևոսյան

Դրամավարկային քաղաքականության վարչություն

ԵՐԵՎԱՆ 2002

Բովանդակություն

1 Ներածություն..... էջ 3

2 Ընդհանուր նկարագիր ..... էջ 4

3 Գյուղատնտեսությունում տնտեսական զարգացումները վերջին տասը տարիներին..... էջ 4

4 Գնագոյացման առանձնահատկությունները գյուղատնտեսական մթերքների շուկայում ..... էջ 12

4.1 Կարտոֆիլ..... էջ 14

4.2 Պտուղ հատապտուղ ..... էջ 178

4.3 Խաղող ..... էջ 20

4.4 Բանջարաբոստանային կուլտուրաներ..... էջ 191

4.4 Անասնապահություն ..... էջ 203

4.5 Կաթ ..... էջ 204

4.6 Ձու..... էջ 225

4.7 Միս ..... էջ 236

5 Մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը գյուղտնտեսության գների վրա ..... էջ 247

6 Գյուղատնտեսության հնարավոր զարգացումները տեսանելի ապագայում . էջ 282

7 Ամփոփում ..... էջ 315

Ներածություն

ՀՀ կենտրոնական բանկը գների կյունությունը դիտարկելով իր գլխավոր նպատակը առանձնակի ուշադություն է դրաճնում տնտեսությունում գնագոյացման գործընթացի տնտեսագիտական մեկնաբանմանը, և ակտիվորեն իրականացնում է այդ խնդրին ուղղված վերլուծական աշխատանքներ:

Այս աշխատանքի հիմնական նպատակն է՝ հետազոտել գնագոյացման առանձնահատկությունները գյուղատնտեսությունում: Փորձել մակրո և միկրո մակարդակներում վերլուծել գյուղատնտեսական մթերքների գների վարքագիծը պայմանավորող գործոնները, գյուղատնտեսական մթերքների շուկաների կառուցվածքային առանձնահատկությունները:

Աշխատանքում մասնավորապես ներկայացվում է վերջին տաս տարիներին գյուղատնտեսությունում արձանագրված տնտեսական զարգացումները, տրվում է գյուղատնտեսական մթերքների շուկաների կառուցվածքային նկարագիրը և քննարկվում է կոնկրետ ապրանքային շուկայում գնագոյացման գործընթացը: Աշխատանքում վերլուծվել է վերջին հինգ տարիներին գյուղատնտեսական մթերքների գների վրա մակրոտնտեսական գործոնների թողած ազդեցությանը: Վերջում դաողություններ են արված գյուղատնտեսության հնարավոր զարգացումների վերաբերյալ:

Աշխատանքի արդյունքում ակնկալվում է ձևակերպել գյուղատնտեսական մթերքնրի շուկաներում գնագոյացման հիպոթեզեր:

Որպես այս փաստաթղթի տրամաբանական շարունակություն նախատեսվում է ստուգել ձևակերպված հիպոթեզերը և մոդելավորել:

Ընդհանուր նկարագիր

- *ՀՀ-ում օգտագործելի հողատարածքները կազմում են 1391.4 հազ. հա (կամ 13.914 հազ քառ կմ), որի շուրջ կեսը արոտավայրեր են*
- *2002թ. հունվարի 1-ի դրությամբ սեփականաշնորհված են 467.8 հազ. հա*
- *Գյուղատնտեսության ոլորտը ընդգրկում է շուրջ 335 հազար գյուղացիական տնտեսություններ. յուրաքանչյուրին բաժին է ընկնում միջին հաշվով 1.4 հա հողատարածություն*
- *Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները վճարում են միայն հողի հարկ՝ հողատարածքի կադաստրային զուտ եկամտի 15 տոկոսի չափով*
- *Գյուղացիական բնակչության 48.7 % աղքատ են*[1]
- *Ճյուղի կշիռը ՀՆԱ-ում 2001 թվականին կազմել է 25%*
- *Միջին տարեկան իրական աճը վերջին հինգ տարիներին կազմել 3.8 %*
- *Գյուղատնտեսությանը բաժին է ընկնում ընդհանուր զբաղվածների 35.3 %*

Գյուղատնտեսությունում տնտեսական զարգացումները վերջին տասը տարիներին

ՀՀ-ում 90-ական թվականներին սկզբին մուտքը նոր տնտեսական կացութաձևի սկզբնավորեց խորը տնտեսական ճգնաժամով: Ճգանժամը, արդյունք լինելով նոր տնտեսական հարաբերությունների ձևավորման, արձանագրեց նաև տնտեսության ոլորտների, ճյուղերի միջև ռեսուրսների նոր՝ արդեն շուկայական հարաբերությունների տրամաբանությամբ արդարացված վերաբաշխում: Ռեսուրսների վերաբաշխումը ճյուղերի միջև իր հերթին նշանակում էր, որ թե՛ ճգնաժամի, և թե՛ առողջացման կամ արդեն աշխուժացման տարիներին տնտեսության տարբեր ճյուղեր՝ նախ և առաջ պայմանավորված իրենց առանձնահատկություններով, տարբեր զարգացումներ կապրեն: Այդ առումով գյուղատնտեսությունը ընդհանուր տնտեսական զարգացումների համատեքստում առանձնացավ յուրովի:

Չնայած 90-ականների սկզբի տնտեսական խորը անկմանը՝ գյուղատնտեսությունում թողարկված արտադրանքի ծավալը, համեմատած տնտեսության մյուս ճյուղերի, փոքր անկում ապրեց: Միայն 1992 թվականին նախորդ տարվա նկատմամբ գրանցվեց ՀՆԱ-ի 41.8 տոկոս անկում (1992-ի ԱՊՀ համանման ցուցանիշը գերազանցելով ավելի քան 6 անգամ), ընդ որում, անկում տեղի ունեցավ տնտեսության բոլոր ճյուղերում: Ամենախորը անկումը

[1] Աղբյուրը «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր»

գրանցվեց շինարարությունում, որը կազմեց 85.3 տոկոս, իսկ արդյունաբերության թողարկման ծավալները նվազեցին 59.7 տոկոսով: Գյուղատնտեսությունում անկումը համեմատաբար փոքր էր՝ 8.7 տոկոս:

Բարձր կապիտալատարություն պահանջող ճյուղերում տնտեսական ճգնաժամը հանգեցրեց աշխատուժի արտահոսքի, որի արդյունքում զբաղվածությունը գյուղատնտեսությունում աճեց: Մասնավորապես 1990 թվականին գյուղատնտեսությունում աշխատում էին զբաղվածների 17,7 տոկոսը իսկ 1994 թվականին՝ 33,9 տոկոսը (զբաղվածության աճի մի մասը տեղի է ունեցել հարաբերական աճի պատճառով՝ ընդհանուր զբաղվածության նվազման հաշվին): Սակայն գյուղատնտեսությունում զբաղվածության աճը միայն տնտեսական գործոնով չէր պայմանավորված: Ճգնաժամի տարիներին բնակչության որոշ զանգված տեղափոխվեց գյուղ ոչ թե այդ ճյուղում տնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, քանի որ ճյուղը հարաբերական լավ տնտեսական բնութագիր կարող էր ստանալ, այլ ուղղակի առկա էր պարենային ապահովվածության խնդիրը:

Տնտեսության ճյուղային կառուցվածքում տեղ գտած փոփոխությունների պատճառով գյուղատնտեսության ավելացված արժեքի կշիռը ՀՆԱ-ում աճեց: Այսպես, եթե 1990 թվականին արդյունաբերությունը, շինարարությունը և գյուղատնտեսությունը ՀՆԱ-ի կառուցվածքում կազմում էին համապատասխանաբար 32.7 19.1 և 17.2 տոկոս, ապա 1993 թվականին արդեն այդ համասնությունները համապատասխանաբար կազմել են 21.7, 3.8 և 48.8 տոկոս:

Գյուղատնտեսության դիրքերի հարաբերական լավացումը հիմնականում բացատրվում է Հայաստանի տնտեսական շրջափակման պատճառով ներմուծվող գյուղմթերքների կրճատմամբ, ինչպես նաև բարեկեցության մակարդակի և սպառման որակի անկման պատճառով գյուղմթերքների նկատմամբ պահանջարկի աճով:

Արտադրական հնարավորությունների տեսանկյուններից ևս ճյուղը առավել պաշտպանված գտնվեց: Մասնավորապես էներգակիրների նորմավորված համեմատաբար փոքր ծախսը, տեխնոլոգիական ցածր զինվածությունը, հումքի խնդիրը և ամենակարևոր հանգամանքը, որ հիմնական կապիտալը՝ հողը մոբիլ չէ, այն որպես կապիտալ դժվարությամբ է տրասֆորմացվում (ավելին, մինչև 1996 թվականը արգելված էր հողի առք ու վաճառք իրականացնել):

Թվարկված գործոնների կողքին հարկ է նշել այդ տարիներին ճյուղում իրականացված կառուցվածքային բարեփոխումները: Բնակչության կենսամակարդակի, պարենային ապահովվածության և զբաղվածության առումով 90-ականների սկզբին առանձնակի ուշադրության արժանացավ գյուղատնտեսությունը: Պետության կողմից իրականացվեց

գյուղատնտեսական բարեփոխումների համալիր ծրագիր, որի առանձքային տարրն էր սեփականաշնորհումը:

1991 թվականի փետրվարի 20-ից գործողության մեջ մտավ «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքը, որը հանդիսացավ հողի, անասնագլխաքանակի և գյուղտնտեսական տեխնիկայի սեփականաշնորհման գործընթացի սկիզբը: Նախկինում գործող 860 կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների լուծարման ու հողի սեփականաշնորհման արդյունքում 1991թ. մայիսի 1-ի դրությամբ ՀՀ-ում ձևավորվեցին մասնավոր սեփականության վրա հիմնված մոտ 107.1 հազար գյուղացիական և 10.1 հազար գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Հողի սեփականաշնորհմանը զուգահեռ, համեմատաբար դանդաղ տեմպերով իրականացվեց գյուղատնտեսության մեքենայական պարկի սեփականաշնորհումը:

Գյուղացիական տնտեսությունների հարկային պարտավորությունները սահմանափակվեցին միայն հողի հարկով՝ հողատարածքի կադաստրային զուտ եկամտի 15 տոկոսի չափով: Հողի հարկի մասին ՀՀ օրենքով միևնույն ժամանակ սահմանվեց, որ հողի ռեֆորմի և սեփականաշնորհման ընթացքում ձևավորված գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները հողի ձեռքբերման պահից 2 տարի ժամկետով ազատվում են հողի հարկից:


Չնայած որոշ բացթողումների՝ իրականացված քաղաքականությունը կարելի է գնահատել բավականին նպատակաուղղված և արդյունավետ, կամ գոնե այդ պահով թելադրված: Մասնավորպես, եթե գյուղտնտեսության հետագա զարգացումների համար 90-ականների առաջին կեսին իրականացված կառուցվածքային բարեփոխումները որոշակի թերություններ ունեին (ինչը կներկայացնենք նյութի հաջորդ հատվածում), ապա այդ պահին, թեկուզ միայն սոցիալական արդարության ճանապարհով պարենի ապահովվածության խնդրի լուծման տեսանկյունից, բավականին արդարացված էր: Ասվածը հիմնավորելու համար նշենք, որ 1990-1993 թվականների ընթացքում ՀՀ ՀՆԱ-ն նվազեց 53 տոկոսով, իսկ ԱՊՀ երկրների ՀՆԱ-ն նվազեց ընդամենը 26,9 տոկոսով: Սակայն նույն ժամանակահատվածում մեր հանրապետությունում գյուղմթերքների համախառն թողարկումը ավելացավ 13,8 տոկոսով, ԱՊՀ երկրներում այն նվազեց 15,3 տոկոսով:

Փաստորեն անցումային շրջանի առաջին ամենադժվարին փուլում գյուղատնտեսությունը որոշակիորեն պահպանեց իր դիրքերը և տնտեսության առողջացման նախաշեմին մեկնարկային առավել բարենպաստ դիրքերում հայտվեց մյուս ճյուղերի համեմատ:

Գյուղատնտեսությունում տնտեսական առողջացման փուլում արձանագրված զարգացումները արդեն որոշակիորեն առանձնանում են վերը նկարագրվածից:


Գյուղատնտեսությունը 90 ականների երկրորդ կեսին զարգացման տեմպերի անկում ապրեց (տես գրաֆիկ 2):

Տնտեսության ճյուղերի իրական աճի տեմպերը
(գրաֆիկ 2)



1994 թվականից ՀՆԱ-ի իրական աճի տեմպը (բացառությամբ 1998 և 2001 թվականները) գերազանցել է գյուղատնտեսության աճի տեմպը: 1995-2001 թվականներին ՀՆԱ իրական աճի միջին տեմպը կազմել է 6%, այն դեպքում, երբ գյուղատնտեսության իրական աճի միջին տեմպը կազմել է ընդամենը 3.6%: Բնականաբար գյուղատնտեսության կշիռը ՀՆԱ-ում գնալով նվազեց (տես գրաֆիկ 3):

Տնտեսության ճյուղերի կշիռները ՀՆԱ-ում իրական արտահայտությամբ
(գրաֆիկ 3)



Փաստորեն այն հանգամանքը կամ գործոնը, որը քիչ թե շատ պաշպանեց գյուղատնտեսությանը խորը անկումից, պայմանավորեց նաև ճյուղի զարգացման համեմատաբար ցածր տեմպերը: Մասնավորապես գյուղտնտեսությունում հնարավոր է

անշան ներդրումներով ապահովել պարզ վերարտադրություն: Սակայն միջին տարեկան 7-8% (որը ՀՆԱ աճի միջին տեմպն է վերջին տարիներին) կայուն իրական աճ ապահովելու համար անհրաժեշտ են խոշրածավալ ներդրումներ, որոշ ենթաճյուղերում նույնիսկ արտադրության կազմակերպման սկզբունքային փոփոխություններ, որոնք տեղի չունեցան պայմանավորված հետևյալ հանգամանքներով:

Նախ ճյուղում կապիտալի հետգնումը համեմատաբար երկարժամետ է, ինչը ռիսկային տնտեսական միջայրում նվազեցնում է ճյուղի մրցունակությունը կապիտալի ներգրավման առումով այնպիսի ոլորտների համեմատ, ինչպիսիք են օրինակ առևտուրը կամ ընդհանրապես ծառայությունների ոլորտը: Միջոցների շրջանառելիությունը գյուղատնտեսությունում կրկին զիջում է ծառայությունների ոլորտում միջին շրջանառելիությանը: Եվ բնականաբար ներքին խնայողությունների և ուղղակի ներդրումների ցածր մակարդակի պայմաններում նվազում է գյուղատնտեսությունում երակարաժամկետ ներդրումների հնարավորությունը:

Առկա էր նաև կառուցվածքային գործոնը. մասնավորապես հողի սեփականաշնորհումը, որը իրականացվեց սոցիալական արդարության սկզբունքով, զարգացման այս փուլում արդեն տնտեսական տեսանկյունից փաստորեն արդարացված չէր: Հողի սեփականաշնորհման արդյունքում ձևավորվեց շուրջ 320 հազար գյուղացիական տնտեսություն և յուրաքանչյուրին բաժին ընկավ միջինը 1.36 հեկտար սեփականաշնորհված հողակտոր:

Հողակտորների մասնատվածությունը հանգեցրեց հողատարածքների ոչ արդյունավետ մշակման: Շատ տնտեսություններ պատրաստ չէին ներդրումների, չէին կարող ձեռք բերել անհրաժեշտ պարարտանյութեր, օգտագործել խոշոր գյուղ տեխնիկա, և ընդհանրապես հանրապետությունում առկա տեխնիկական պարկը հարմարեցված չէր մասնատված փոքր և մեծաքանակ հողատարածքներով տնտեսվարման ձևին:

Հողի առք ու վաճառքի օրենսդրական արգելքները խոչընդոտ հանդիսացան հողի շուկայի ստեղծմանը: Արգելքի բացակայությունը հնարավորություն կտար հողի ազատ առք ու վաճառքի միջոցով ապահովել գյուղացիական տնտեսությունների հետագա ընդլայնումն ու միատեսակ տնտեսությունների ձևավորումը, որը առավել բարենպաստ կլիներ կապիտալի ներգրավման առումով:

Հողի շուկայի բացակայության պատճառների առնչությամբ մեր կարծիքով արդարացի են հետևյալ դատողությունները: Նախ արդեն նշված խնայողությունների ցածր մակարդակը տնտեսությունում և կապիտալի հետգնման և շրջանառելիության առումով անբարենպաստ պայմանները մյուս ճյուղերի համեմատ: Հաջորդ ոչ պակաս կարևոր գործոնը

դա գյուղացու՝ որպես աշխատուժի ցածր մոբիլությունն է և աղապտացվելու հարաբերական անուկությունը, որը նվազեցնում է հողից ազատվելու հակվածությունը: Այսինքն կա վտանգ, որ հողից ազատվելու դեքում հողի սեփականատերը կդառնա գործազուրկ:

Էական բացասական ազդեցություն ունեցավ նաև սեփականաշնորհման գործընթացի հետագա պասիվացումը: Սննդարդյունաբերության և վերամշակող ձեռնարկությունների սեփականաշնորհումը բավականին հետ մնաց հողի սեփականաշնորհումից, և խզվեց կապը գյուղմթերքների արտադրության և վերամշակող ձեռնարկությունների միջև: Սեփականաշնորհման հետաձգման պատճառով որոշ վերամշակող ձեռնարկությունների տեխնոլոգիական զինվածությունը բավականին ուշ տեղի ունեցավ, ինչը իր հերթին պայմանավորեց գյուղատնտսության աճի տեմպերի դանդաղումը:

Հաջորդ կառուցվածքային գործոնը, որը անցած վեց տարիներին խոչընդոտել է ներդրումներին, արտադրական ենթակառուցվածքների խնդիրն է, որը գյուղատնտեսությունում ավելի է արտահայտված քան մյուս ճյուղերում: Մասնավորապես ոռոգման, ճանապարհների, պահեստային տնտեսությունների բացակայության հետ կապված խնդիրները:


Սակայն վերջին ժամանակահատվածում գյուղատնտեսության զարգացման ընթացքը, նշված կառուցվածքային խնդիրների համեմատ, մեր կարծիքով մեծապես ածանցվել է ամբողջական պահանջարկի վարքագիծից, որը ըստ էության հանդիսացել է նաև վերը թվարկված տնտեսական գործոնների՝ ճյուղի շահութաբերության, ներդրումների ցածր մակարդակի հիմնական պատճառը[2]:

Եթե 90-ականների առաջին կեսին գյուղատնտեսական մթերքների նկատմամբ պահանջարկը աճեց մասնավորապես սպառողի բյուջետային սահմանափակման խստացման հետևանքով, ապա տնտեսության վերականգման տարիներին, մասնավորապես 1998 թվականից հետո, երբ սկսեց ընդգծվել գյուղատնտեսության գների հարաբերական անկումը (տես գրաֆիկը 4):

[2] Մանրամասն տես՝ «Մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը գյուղատնտեսության գների վրա» բաժնում

Գների դինամիկան (ինդեքս 1995=100)

գրաֆիկ 4



Եկամուտների աճով սկզբնավորվեց ամբողջական պահանջարկի երկարաժամկետ կառուցվածքային ճշգրտման գործընթացը, սակայն արդեն ոչ ի օգուտ գյուղատնտեսության: Նոր ստեղծված եկամուտը առավելապես ուղղվեց նոր կամ այլ տիպի սպառողական ապրանքների և ծառայությունների ձեռք բերմանը: Իսկ այդ պայմաններում գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ պահանջարկը կարող էր աճել կամ արտահանման հնարավորության դեպքում, կամ սննդի և վերամշակող ձեռնարկությունների կողմից առաջացող պահանջարկի դեպքում: Սակայն վերջինիս հետ կապված, ինչպես վերը արդեն քննարկվեց, որոշակի խնդիրներ կային: Արտահանման առումով բացի տնտեսական բնույթի խոչընդոտներից մեծ դեր բաժին հասավ նաև աշխարհաքաղաքական իրավիճակին, որը մինչ օրս խիստ անբարենպաստ է:

Ինչ վերաբերվում է առաջարկին ապա ճյուղի ներկայիս տեխնիկական հագեցվածության պայմաններում թողարկվող ծավալը մեր կարծիքով բավականին մոտ է պոտենցիալին, և ճյուղի իրական աճի տատանումները անցած տարիների ընթացքում հիմնականում բնակլիմայական գործոնի արդյունք են եղել: Կլիմայական գործոնին ավելացնելով հողերի մասնատվածության պատճառով արտադրական ծախսերի արդյունավետ կառավարման սահմանափակումը և ներդրումների բացակայությունը՝ կարելի է ենթադրել, որ ճյուղի առաջարկը ֆիքսված է: Այս սահմանափակումները իրենց հերթին սեղմում են գյուղացու գնային մանևրումների շրջանակը:

Այսպիսով ներդրումների բացակայության, արտադրական ծախքերի ցածր կառավարելիության արդյունքում ձևավորվում է գրեթե ֆիքսված առաջարկ, և գյուղատնտեսության համար պահանջարկի (նաև արտաքին պահանջարկի) հարաբերականորեն անբարենպաստ զարգացման պայմաններում չուկայում սպառողի

դիրքորոշումը (ճյուղի պահանջարկը) դառնում է որոշիչ: Մյուս կողմից, ճյուղը հանդիսանալով բարձր մրցակցային, մթերքը շուկա է ներկայանում արդեն իսկ հնարավոր ամենացածր գնով:

Ուստի գյուղ մթերքների առաջարկի էլաստիկությունը գնից կարելի է գնահատել բավականին թույլ[3], և վերջնական գնի որոշիչը հինականում հանդիսանում է պահաջարկը:

Ամփոփելով կարելի է ասել, որ վերջին տարիներին՝ ընդհանուր տնտեսական ակտիվության բարձրացման ժամանակշրջանում, գյուղատնտեսության աճի տեմպերի դանդաղումը տնտեսության մյուս ճյուղերի համեմատ բացատրվում է այդ տարիներին ճյուղում ներդրումների համեմատաբար ցածր ծավալներով: Վերջինս իր հերթին պայամանավորված է եղել որոշակի կառուցվածքային խնդիրներով և հիմնականում ամբողջական պահանջարկի զարգացումներով:

Գնագոյացման առանձնահատկությունները գյուղատնտեսական մթերքների շուկայում

Վերը արված դատողությունները հիմնականում կառուցվեցին ճյուղի իրական աճի համեմատական և բացարձակ փոփոխությունների ուսումնասիրությունների արդյունքում: Մենք դիտավորյալ չանդրադարձանք գնային դաշտում տեղ գտած զարգացումներին՝ նպատակահարմար տեսնելով այն քննարկել առավել դետալացված, ենթաճյուղային զարգացումների համատեքստում՝ կոնկրետ ապրանքատեսակների շուկաները ուսումնասիրելով: Եվ այս բաժնում արդեն կփորձենք վերլուծել վերջին տարիներին գյուղատնտեսության ենթաճյուղերում տեղ գտած զարգացումները՝ ուշադրությունը հիմնականում դարձնելով թողարկման ծավալների, գների վարքագծին և դրանց վրա ազդող հիմնական գործոններին՝ փորձելով ձևակերպել գնագոյացման հիպոթեզները:

Շուկայի կառուցվածքային ձևը որոշում է տվյալ շուկայում գնագոյացման եղանակը: Այդ իսկ պատճառով մինչ ենթաճյուղային վիճակագրության ուսումնասիրությունը փորձենք տալ գյուղատնտեսության շուկայական կառուցվածքի ընդհանուր նկարագիրը (մրցակցության պայմաններ, տնտեսական գործունեության սահմանափակումներ և այլն):

- ճյուղ մուտք գործելու (արտադրողի տեսանկյունից) արգելքների բացակայություն
- թողարկողների մեծ քանակ՝ գյուղատնտեսության ոլորտը ընդգրկում է շուրջ 335 հազար գյուղացիական տնտեսություններ յուրաքանչյուրին բաժին է ընկնում միջին հաշվով 1.4 հա հողատարածություն

[3] Թվային ճշգրիտ գնահատական տալ դժվարանում ենք՝ վիճակագրության բացակայության պատճառով:

- թողարկվող արդյունքը գերազանցապես լայն սպառման համար է, որը ենթադրում է գնորդների մեծ քանակ (բացառությամբ մեկ երկու կուլտուրայի՝ տեխնիկական և վերամշակվող խաղողը)
- առաջարկի գնային ցածր էլաստիկություն, փոխարենը պահանջարկի համեմատաբար բարձր էլաստիկություն
- գյուղատնտեսական մթերքների իրացման հիմնական շուկան ներքինն է (արտահանման հնարավորությունները սահմանափակ են և մոտ ապագայում այդ առումով իրավիճակի բարելավում չենք ակնկալում)
- թողարկման սեզոնայնությունը և արդյունքի պահպանման բարձր ծախսատարությունը
- ճյուղի աշխատուժի ցածր մոբիլություն, աշխատավարձերի բացարձակ և համեմատական ցածր մակարդակ
- արտադրության կազմակերպման արդյունավետության ցածր մակարդակ
- բացակայում է գների պետական կարգավորումը
- գործում է միայն հողի հարկը, պետական դոտացիաներ չեն տրամադրվում

Ներկայացված գործոնների ներքո ենթադրվում է, որ գյուղտնտեսական ապրանքների շուկայում մարցակցության աստիճանը բավականին բարձր է, և գնագոյացումը կատարվում է մրցակցային պայմաններում (բացառությամբ որոշ ենթաճյուղերի, որոնք կառանձնացվեն), ինչը դասական բնորոշմամբ նշանակում է, որ կարճաժամկետ հատվածում կոնկրետ արտադրողի համար գինը տրված է, որը ճյուղի (ապրանքի) շուկայում ձևավորվում է ազատ մրցակցության պայմաններում՝ ճյուղի (ապրանքի) առաջարկի և պահանջարկի հաշվեկշռվածության արդյունքում: Այսպիսով, մինչ կոնկրետ ապրանքային շուկաների ուսումնասիրությունը հիմնական հիպոթեզը գնագոյացման առնչությամբ կարելի է ձևակերպել որպես «գնագոյացում մրցակցության պայմաններում»:

Այժմ կոնկրետ ենթաճյուղերի և ապրանքատեսակների շուկաների հիմնական տնտեսական ցուցանիշների ուսումնասիրության միջոցով փորձենք դատողություններ անել շուկայի կառուցվածքի գնագոյացման առանձնահատկությունների վերաբերյալ:


Հացահատիկային մշակաբույսեր•

Հացահատկի մասնաբաժինը գյուղատնտեսական մշակաբույսերի համախառն թողարկման մեջ կազմում է մոտ 20%: Նկատելի է ցանքատարածությունների և թողարկման ծավալների միջև ուղղակի կապ (տես գրաֆիկ 5): Իսկ թողարկման ծավալների տատանումները ցանքատարածությունների հաստատունության պայմաններում ընդամենը բնակլիմայական գործոնի հետևանք է:

• Վերլուծությունը կատարվի 1997 թվականից սկսած՝ նախորդ տարիների տվյալների բացակայության պատճառով:

Հացահատիկային մշակաբույսեր

(գրաֆիկ 5)



Ցանքատարածությունների ընդհանուր մակերեսը վերջին հինգ տարիներին լուրջ փոփխություններ չի կրել, որը ամենայն հավանականությամբ խոսում է հացահատիկի համեմատաբար կայուն շահութաբերության մասին: Ցանքատարածությունների կայունությունը որոշակիորեն պայմանավորվում է նաև գյուղատնտեսությունում ներդրումների ցածր մակարդակով և արտադրական ենթակառուցվածքների ոչ բարենպաստ վիճակով, որը խոչընդոտում է ցանքատարածությունները համեմատաբար ծախսատար և միևնույն ժամանակ առավել շահութաբեր կուլտուրաներ մշակելու համար օգտագործելուն:

Հացահատիկի առաջարկի տեսանկյունից կարևորվում է նաև ներմուծումը, որը ապահովում է ներքին սպառման մոտ 40%: Չնայած այն հանգամանքին, որ ներմուծումը բավականին մեծ կշիռ ունի շուկայում և այն իրականացվում է թվով քիչ ներմուծողների կողմից, հակված չենք ենթադրելու, որ հացահատիկի շուկայում գինը մրցակցային չէ և որոշակիորեն կառավարվում է ներմուծողների կողմից, քանի որ ներմուծման ծավալները փոփոխվում են ներքին բերքի ծավալներից կախված (տես գրաֆիկ 5): Փաստորեն հացահատիկի շուկայում առաջարկը բավականին կայուն է և սեզոնային տատանումները գրեթե բացակայում են:

Ինչ վերավերվում է հացահատիկի պահանջարկին, ապա այն, ի տարբերություն մյուս գյուղմթերքների, կարճաժամկետ հատվածում զգալի փոփոխությունների չի կարող ենթարկվել: Հացահատիկի սպառումը (պահանջարկը) հավասարաչափ է բաշխվում տարվա

ընթացքում և միայն երկարաժամկետում այն կարող է փոփոխվել եկամտի փոփոխությանը զուգահեռ:

Ամփոփելով վերը արված դատողությունները՝ կարող ենք ասել, որ հացահատիկի շուկայում գինը ձևավորվում է մրցակցային պայմաններում և առկա են հետևյալ առանձնահատկությունները՝

- *պահանջարկը և առաջարկը հարաբերականորեն կայուն են, ինչի հետևանքով գինը ևս հազվադեպ է տատանվում*
- *ներքին առաջարկի տատանումները հիմնականում բնակլիմայական գործոնի հետևանք են, որի տեղի ունենալու դեպքում շուկայում ընդհանուր առաջարկը կարգավորվում է ներմուծման ճշգրտման հաշվին՝ հիմնականում անփոփոխ թողնելով գները*
- *տարվա ընթացքում գնի սեզոնային տատանումները գրեթե բացակայում են՝ պայմանավորված թողարկման պահպանման համեմատաբար ցածր ծախսատարությամբ և տարվա ընթացքում կանխատեսելի կայուն պահանջարկով*


Ապագայում պահանջարկի հանարավոր զարգացումների վերաբերյալ կարելի է ենթադրել, որ եկամուտների ցածր աճի և ներկայիս կենսամակարդակի պայմաններում հացահատիկային մշակաբույսերի սպառման ծավալների լուրջ փոփոխություններ դժվար թե կրեն: Իսկ երկարաժամկետում՝ աղքատության կրճատման, կենսամակարդակի բարձացմանը զուգընթաց, ենթադրվում է, որ այն կկրճատվի՝ այս դասի ապրանքներին հատուկ՝ պահանջարկի եկամտից ունեցած ցածր էլաստիկության պատճառով:

Կարտոֆիլ

Կարտոֆիլի շուկայում արձանագրված զարգացումները որոշակիորեն առանձնանում են՝ հիմնականում պայմանավորված երկարժամկետ հտվածում եկամուտներից պահանջարկի բացասական էլաստիկությամբ, կարճաժամկետում՝ սպառման հարաբերական կայուն սեզոնայնությամբ:

1992-93 թվականներին տնտեսական ճգնաժամի տարիներին կարտոֆիլի ցանքատարածությունները աճեցին մոտ 30%, որին զուգահեռ աճեցին նաև թողարկման ծավալները: Թողարկման ծավալների բարձր մակարդակը պահպանվեց մինչև 1998

Կարտոֆիլի և մսի սպառման փոփոխությունը բնակչության մեկ շնչի հաշվով
(գրաֆիկ 6)




թվականը: Այնուհետև շարունակվում է արձանագրվել նվազման միտում: Թողարկման ծավալների նվազումը հիմնականում պայմանավորված է սպառողների մոտ եկամուտների հարաբերական աճի հետևանքով սպառողական զամբյուղի կառուցվածքի ճշգրտմամբ (տես գրաֆիկ 6). մեկ շնչի հաշվով կարտոֆիլի սպառումը վերջին տարիներին դրսևորել է նվազման միտում, մինչդեռ մսի սպառումը աճել է: Փաստորեն կարտոֆիլի նկատմամբ պահանջարկի կրճատումը, որը սկսել է դրսևորվել 1998 թվականից հետո, հանգեցրել է թողարկման ծավալների կրճատման:

Կարտոֆիլի շուկայում առաջարկի նվազումը, պայմանավորված լինելով պահանջարկի նվազմամբ, հանգեցրել է նաև գների նվազման, ինչը ակնհայտ երևում է 1998-2000 թվականներին: Սակայն պատկերը որոշակիորեն այլ է 2001 թվականին, երբ 2000 թվականի համեմատ թողարկման ծավալների աճին զուգահեռ աճել են նաև գները (տես գրաֆիկ 7):

Կարտոֆիլ

(գրաֆիկ 7)



Եթե բողարկման ծավալների աճը բացատրվում է նախորդած տարում՝ 2000 թվականին, բնակլիմայական անբարենպաստ պայմաններում կարտոֆիլի բողարկման ծավալների կտրուկ անկմամբ, ապա գների առումով վստահ դատողություններ անելը դժվար է: Կարծիք կա, որ 2001 թվականին իրականացվել է կարտոֆիլի ստվերային արտահանում Վրաստան:

Այսպիսով, ամփոփելով վերը արված բողարկման ծավալների և մեծածախ գների վարքագիծերի ուսումնասիրությունները և հաշվի առնելով այն հանգամանքը, որ կարտոֆիլի մեծածախ շուկայում մասնակիցների թիվը բավականին մեծ է և շուկան ըստ էության սահմանափակումներ չունի, կարելի է ասել, որ գնագոյացումը կատարվում է մրցակցության պայմաններում՝ ելնելով հետևյալ առանձնահատկություններից.

- *չնայած պահպանման համեմատաբար ցածր ծախսատարությանը և տարվա ընթացքում համեմատաբար կայուն սպառման՝ գինը ենթարկվում է սեզոնային տատանումների*
- *գնի կարճաժամկետ տատանումները, ի տարբերությունը մյուս մշակաբույսերի, պայմանավորված են ոչ միայն առաջարկի տատանումներով, այլ նաև արտաքին պահանջարկի առկայությամբ, որը իր հերթին բավականին անկայուն է:*
- *գնի երկարաժամկետ ճշգրտումները պայմանավորված են պահանջարկի կառուցվածքային տեղաշարժերով, որի էլաստիկությունը եկամտից բացասական է*


Պտուղ հատապտուղ

Մինչև 1998 թականը նկատվել է ցանքատարածությունների կայուն նվազում որը բնականաբար ուղեկցվել է թողարկման ծավալների նվազմամբ (տես գրաֆիկ 8):

Պտղի ցանքատարածությունների նվազմանը զուգահեռ աճել են կարտոֆիլի և

Պտուղ և հատապտուղ

գրաֆիկ 8



հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունները: Եթե ավելացնենք, որ այդ տարիներին պտղի և հատապտղի հարաբերական գները դրսևորել են նվազման միտում, ապա ընդհանուր պատկերը բավականին որոշակի է դառնում. եկամուտների ցածր մակարդակի պայմաններում բարձր դասի ապրանքախմբերի նկատմամբ պահանջարկը փոխարինվել է համեմատաբար ցածր դասի և փոխարինիչների նկատմամբ պահանջարկի աճով: Այսինքն այս ապրանքախմբի շուկայում 1993-98 թվականներին տեղի ունեցած տեղաշարժերը հիմնականում պայմանավորված են եղել եկամուտների ցածր մակարդակով, որը շուկայում արտահայտվել է պահանջարկի անկմամբ:

1998 թվականից հետո նկատվում է ցանքատարածությունների անշան աճ: 1998-99 թվականներին գործարկվեցին սննդի վերամշակող մի քանի նոր ձեռնակություններ: Դրան զուգահեռ համախառն եկամուտների արդեն արձանագրվող կայուն աճը այս ապրանքախմբի շուկայում արտահայտվեց պահանջարկի կայունացմամբ: 1999 թվականից հետո թողարկման ծավալների տատանումները հիմնականում բնակլիմայական գործոնի հետևանք են եղել, որը արտահայտվել նաև գների տատնումներով (տես գրաֆիկ 8):

Մասնավորապես 1999 թվականին արձանագրվել է պտղի և հատապտղի թողարկման ծավալների նվազում, որին զուգահեռ աճել են գները: 2000 թվականին մրգի գները կտրուկ նվազել են, սակայն գրեթե նույն չափ աճ է արձանագրվել թողարկման ծավալների գծով: Երկու ուղղություններով հակառակ միտումը արձանագրվել է 2001 թվականին:

Այս դեպքում, եթե առաջարկը ցածր կառավարելի է՝ բնակլիմայական գործոնով պայմանավորված, ապա պահանջարկի առումով կարճաժամկետում էական տեղաշարժեր ակնկալելու հիմքեր չկան: Այն կարող է փոփոխվել միայն եկամտի աճի և հավասարաչափ վերաբաշխման պայմաններում, ինչը նշանակում է սպառման կառուցվածքի փոփոխություն, որը կարճաժամկետում շոշափելի տեղաշարժեր դժվար թե ունենա: Այսիպիսով պտղի և հատապտղի շուկայում գնի տատանումները հիմնականում թողարկման ծավալների տատանումների հետևանք են:

Ակնհայտ է դառնում, որ գինը բավականին ճկուն է և ազատ տատանվում է շուկայում: Եվ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ շուկայի մասնակիցները բազմաթիվ են, կոնցենտրացիան բավականին փոքր *է, ապա կրկին հանգում ենք այն եզրակացությանը, որ այս ապրանքախմբի շուկայում գնագոյացումը կատարվում է մրցակցային պայմաններում և որպես առանձնահատկություն կարող ենք նշել՝*


- *գինը կարճաժամկետում ճկուն է*
- *առաջարկի համեմատական ցածր կառավարելիության և կարճաժամկետում կայուն պահանջարկի առկայության պայմաններում գինը ենթարկվում կտրուկ տատանումների*
- *երկարաժամկետում պահանջարկի էլաստիկությունը եկամտից դրական է*

Խաղող

Եկամուտների մակարդակի կտրուկ անկումը 90-ականների սկզբին նույն ազդեցությունը ունեցավ, ինչ որ պտղի և հատապտղի շուկայում: Խաղողի տնկարկների թիվը նվազեց մինչև 1998 թվականը, որից հետո նկատվում է որոշակի կայունություն (սակայն դեռևս արձանագրվում է ցանքատարածությունների նվազում): Ցանքատարածությունների նվազումը ուղեկցվեց թողարկման ծավալների նվազմամբ: Այսինքն կրկին պահանջարկի նվազումը, իր հերթին պայմանավորված եկամուտների նվազմամբ, հանգեցրեց ցանքատարածությունների կրճատման, թողարկման ծավալների և հարաբերական գների (տես գրաֆիկ 9) նվազման:

Խաղող

գրաֆիկ 9



1998 թվականից սկսած եկամուտների մակարդակի կայունացումը, սպառման կառուցվածքի ճշգրտումը և վերամշակող ձեռնարկությունների գործունեության վերսկսումը հանգեցնում են շուկայում պահանջարկի կայունացման, որը իր հերթին ուղղեկցվում է թողարկման ծավալների ցածր, բայց կայուն աճով: Սակայն այդ ամենից անկախ գները նվազում են մինչև 2000 թվականը:


Նկարագրված իրավիճակում գների նման վարքագիծը հնարավոր է ապրանքային շուկայում կառուցվածքային փոփոխության դեպքում միայն, այն էլ փոքրաթիվ գնորդների կողմից նպատակային կոշտ գնային քաղաքականության դեպքում, որը շատ հնարավոր է մեր օրինակում: Փաստորեն 1998 թվականից հետո շուկայում կայուն պահանջարկ ներկայացնողները հիմնականում եղել են մթերող կազմակերպությունները, որոնք շուկայում հանդես են եկել փոքր թվով, ինչը հնարավորություն է տվել նրանց գները ցածր պահելու (չնայած իրենց կողմից թողարկվող արտադրանքի գների աճին, մասնավորապես կոնյակը):

Փաստորեն խաղողի դեպքում գնագոյացումը առանձնանում է: Եթե մյուս կուլտուրաների ապրանքային շուկաներում գինը ձևավորվում էր ազատ մրցակցային պայմաններում, ապա այս դեպքում գինը որոշակիորեն կարգավորվում է գնորդի կողմից:

Բանջարաբոստանային կուլտուրաներ

Բանջարաբոստանային կուլտուրաների թողարկման ծավալները վերջին տարիներին լուրջ փոփոխություններ չեն կրել: Թողարկման ծավալների առումով արձանագրված տատանումներին զուգահեռ տատանվել են նաև ցանքատարածությունները (տես գրաֆիկ 10): Այսինքն ի տարբերություն վերը դիտարկված ապրանքախմբերի՝ բանջարաբոստանային կուլտուրաներին հատկացված ցանքատարածությունները բավականին ճկուն են օգտագործվել:

Բանջարեղեն
(գրաֆիկ 10)



Եթե թողարկման ծավալների և ցանքատարածությունների փոփոխությանը զուգահեռ դիտարկենք նաև գների վարքագիծը, ապա կտեսնենք, որ մեկ տարի լագով գնի փոփոխությանը նույն ուղղությամբ հետևում են ցանքատարածությունները, հետևաբար և թողարկման ծավալները: Այսպես 1998 թվականին գների 3.1% աճին հաջորդ տարի հետևեց ցանքատարածությունների 17%, համախառն թողարկման 19% աճ: ԵՎ նույն 1999 թվականի գների անկմանը 2000 թվականին հետևեց ցանքատարածությունների 8% կրճատում, որը երաշտի ազդեցությանը գումարվելով՝ հանգեցրեց համախառն թողարկման կրճատման: 2000 թվականին գները շարունակեցին նվազել, որը կրկին արտահայտվեց 2001 թվականին ցանքատարածությունները ընդհանուր մակերեսի կրճատմամբ:

Փաստորեն այս ապրանքախմբի շուկայում առաջարկը հետևում է գնի փոփոխությանը: ԵՎ եթե ընդունենք, որ շուկայի մասնակիցների կոնցենտրացիան բավականին փոքր է, ապա կարելի է ենթադրել, որ այս շուկայում նա գնագոյացումը կատարվում է մրցակցային շուկայի պայմաններին համապատասխան, և առկա է հետևյալ առանձնահատկությունը՝

- *ցանքատարածությունների ճկուն օգտագործելիություն (առաջարկը կարող է փոփոխվել՝ ելնելով նախորդ տարվա գներից)*

Անասնապահություն

Այս ենթաճյուղը որոշակիորեն առանձնանում է վերը ներկայացված ընդհանուր նկարագրից.

- տնտեսական հարաբերությունները անասնապահության և սննդի վերամշակող արդյունաբերության միջև առավել սերտաճած են
- արտադրության կազմակերպման արդյունավետության աստիճանը (ներդրումների ծավալը անասնապահությունում ավելի բարձր է ի տարբերություն բուսաբուծությանը)
- բնակլիմայական գործոնի ազդեցությունը համեմատաբար փոքր է
- թողարկվող արտադրանքի սեզոնայնությունը առավել մեղմ է

Այս պայմանների ներքո գնագոյացումը անասնապահական ապրանքների շուկայում որոշակիորեն առանձնանում է:


Կաթ

Կաթնամթերքի թողարկումը ընդհանուր անասնապահական արտադրանքի թողարկման մեջ կազմում է 73 %: 1997 թվականից սկսած այն կայուն տեմպերով աճում է: Թողարկման ծավալների աճին հակառակ նվազում է գինը. 1997-2001 թվականները կաթի թողարկման ծավալները աճել են մոտ 9.4 %, գները նվազել են 17 % (տես գրաֆիկ 11):

Այս դեպքում հնարավոր է, որ տեղի են ունեցել հետևյալ երևույթները: Կամ

Կաթ

(գրաֆիկ 11)




ներդրումների աճը հանգեցրել է արտադրողականության աճի և միավոր ծախսատարության նվազման, որի արդյունքում պահանջարկից արագ աճել է թողարկումը և հետևաբար նվազել են գները, կամ պահաջարկը վերամշակող ձեռնարկությունների կողմից աճել է, որին հետևել է թողարկման աճ, սակայն շուկայում գնորդների (վերամշակող ձեռնարկությունների) կողմից որոշակիորեն կառավարվել է առքի գինը:

Փորձենք քննարկել հնարավոր տարբերակները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներին կաթնամթերքի թե՛ ծավալը սպառողական շուկայում և թե՛ տեսականին բավականին աճել են, հիմնվել են նոր վերամշակող ձեռնարկություններ, ապա դժար թե ճիշտ է այն ենթադրությունը, որ կաթի պահանջարկը կայուն է մնացել կամ ավելի դանդաղ է աճել, որի հետևանքով գները նվազել են: Մնում է երկորդ տարբերակը, որի օգտին են խոսում վերմշակող խոշոր մի քանի ձեռնարկությունների հիմնադրումը, և սպառողական ու մեծածախ շուկաներում կաթի գների որոշակի տարամետ ուղղությունները: Մասնավորապես վերամշակված կաթի գինը, որը թողարկվում է տեխնոլոգիապես լավ զինված նոր ձեռնարկությունների կողմից, վերջին տարիներին աճել է այն դեպքում, երբ հում կաթինը դրսևորել է նվազման միտում (տես գրաֆիկ 12):


Կաթի գները մեծածախ և սպառողական շուկաներում

(գրաֆիկ 12)



Ձու

(գրաֆիկ 13)



Այսպիսով հակված ենք այն կարծիքին, որ կաթի գները մեծածախ շուկայում ձևավորվում են ոչ ազատ մրցակցային պայմաններում և որոշակիորեն կարգավորվում են գնորդների կողմից:

Ձու

Եկամուտների աճին զուգահեռ 1998 թվականից սկսած նկատվել է ձվի պահանջարկի աճ, որի զգալի մասը բավարարվել է ներմուծման հաշվին: Սակայն նույն 1998 թվականից սկսած այս ճյուղում որոշակի ներդրումների արդյունքում ներքին թողարկման ծավալները զգալիորեն աճել են: Ներքին թողարկման աճին հակառակ արձանագրվել է ներմուծման ծավալների նվազում, որին զուգահեռ նվազել են նաև գները (տես գրաֆիկ 13):

Փաստորեն ձվի շուկայում տեղի է ունեցել ներմուծման փոխարինում: Եթե այդ երևույթը բաց տնտեսության պայմաններում ուղեկցվել է գների նվազմամբ, ապա կարելի է ենթադրել, որ արտադրողների և ներմուծողների միջև, կամ ուղղակի առաջարկի կողմում տեղի է ունեցել նորմալ մրցակցություն, որը բնականաբար պետք է ուղեկցվեր գների նվազմամբ: Ինչ վերաբերվում է պահանջարկին, ապա այն անկասկած մրցակցային է: Սակայն թողարկողների սակավությունը թույլ է տալիս ենթադրելու, որ ներմուծման փոխարինման գործընթացի ավարտին կիետևի գների անկման դադարումը:


Միս

Մսի արտադրության ծավալները Հայաստանում վերջին տարիներին էական փոփոխությունների չեն ենթարկվել: Նկատվում է թողարկման ծավալների շատ թույլ աճի միտում՝ չնայած մսի և մսամթերների սպառման որոշակի աճի: Դրա հիմնական պատճառը այն է, որ մսամթերքների արտադրության համար օգտագործվող հումքի որոշակի մասը ներմուծվում է: Իսկ ներդրումների ընդհանուր ցածր մակարդակը հնարավորություն չի տալիս ներքին թողարկման ծավալների շոշափելի աճ ապահովել: Այնուամենայնիվ ներմուծման ծավալները որոշակորեն կախված են ներքին թողարկաման ծավալներից (տես գրաֆիկ 14):

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ներքին արտադրողները բավականին մեծաքանակ են կարելի է ենթադրել, որ այս ենթաճյուղում առաջարկը մրցակցային է: Ինչ

Միս և մսամթերք

գրաֆիկ 14



վերաբերվում է պահանջարկին, ապա կարելի է ասել, որ մսի և մսամթերքների սպառումը զգալիորեն աճել է և սպառողների կազմում հայտնվել են այնպիսի խոշոր սպառողներ, ինչպիսիք են վերամշակող ձեռնարկությունները:

Գնի վարքագծի վերաբերյալ վստահ դատողություններ անելը դժվար է, քանի որ վերջինս չի համապատասխանում թողարկման և սպառման փոփոխությունների տրամաբանությանը: Եթե համարենք, որ պահանջարկի տատանումներին առաջարկը արձագանքել է բավականին ճկուն՝ ներմուծման գործոնի շնորհիվ, ապա գինը պետք է

դրսևորեր որոշակի կայուն միտում և ամենայն հավանականությանայն կարող էր ունենալ թեթև աճի միտում: Սակայն մեր դեպքում պատկերը այլ է:

Այսպիսով գյուղատնտեսության ենթաճուղային զարգացումների, շուկայական կառուցվածքի, գնագոյացման առանձնահատկությունների ուսումնասիրությունները կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

- առաջարկը որոշակի սահմաններում հաստատուն է (եթե բացառում ենք բնակլիմայական գործոնը)
- առաջարկը գնից էլաստիկ չէ, բացառությամբ որոշ մշակաբույսերի, որոնց դեպքում առաջարկը էլաստիկ է նախորդ տարվա գներից
- շուկաների մեծամասնությունում գնագոյացումը կատարվում է մրցակցային պայմաններում
- գնի կարճաժամկետ տատանումները հիմնականում առաջարկի տատանումների հետևանք են, որը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական գործոնով
- գնի երկարաժամկետ ճշգրտումները հիմնականում պահանջարկի կառուցվածքային փոփոխությունների արդյունք են

Բացառություն է կազմում խաղողի շուկան, որտեղ որոշակի է սակավաթիվ խոշոր գնորդների կողմից հակամրցակցային քաղաքականությունը, որի արդյունքում գինը արհեստականորեն պահպանվում է ցածր մակարդակում:

Նյութում առաջարկվող հիպոթեզների իսկությունը նպատակահարմար ենք տեսնում ստուգել փորձնական վիճակագրական հարցման միջոցով:


Մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը գյուղատնտեսության գների վրա

Գնագոյացման վերաբերյալ վերը արված դատողությունները հիմնվեցին կոնկրետ ապրանքների կամ ապրանքախմբերի շուկաների ուսումնասիրության վրա: Ճյուղում գնագոյացման կամ ճյուղի գների դրսևորած վարքագծի վերաբերյալ ընդհանրացված պատկեր ստանալու նպատակով դիտարկենք գյուղատնտեսության ճյուղի ագրեգացված ցուցանիշները և փորձենք ստուգել գնագոյացման առումով վերը արված հիմնական եզրակացությունները արդեն ճյուղի մակարդակում:

Ինչպես տեսնում ենք համախառն թողարկման և գների վերջին հինգ տարիների միտումները միմյանցից անկախ են (տես գրաֆիկ 15):

Գյուղատնտեսության համախառն թողարմնան իրական աճի և գների դեֆլյատորի դինամկան

գրաֆիկ 15



Սա վկայում է այն մասին, որ իրոք եթե ամբողջական առաջարկում կառուցվածքային տեղաշարժեր չեն տեղի ունենում, (մասնավորապես ներդրումների աճ, ենթակառուցվածքների բարելավում և այլն) այն գների վրա կարող է ազդեցություն ունենալ միայն բնակլիմայական գործոնով պայմանավորված կարճաժամկետ տատանումների դեպքում: Հետևաբար վերջին հինգ տարիների ընթացքում գների դրսևորված հիմնական միտումները առավելապես ամբողջական պահանջարկով են պայմանավորվել: Հետևաբար վերջին հինգ տարիների ամբողջական պահանջարկի վարքագիծը ուսումնասիրելով փորձենք բացատրել գյուղատնտեսական ապրանքների գների միտումները:

Մինչև 1998 թվականը՝ մասնավորապես 1995-1996 թվականներին, տնտեսությունը գտնվում էր հետհիպերինֆլյացիոն հատվածում: Չնայած սղաճի զսպմանը և փոխարժեքի կայունությանն ուղղված արդյունավետ տնտեսական քաղաքականությունը՝ տնտեսությունում բացասական սպասումների ձևավորման համար նպաստավոր հող էր պահպանվել, որը որոշակիորեն չեզոքացավ վերջին չորս տարիներին միայն:

Մինչև 1997-1998 թվականների սղաճը դժվար թե կարելի լինի մեկնաբանել որպես պահանջարկի աճի հետևանքով առաջարկի կողմից ռեսուրսների գների ճշգրտման արդյունք: Չնայած ամբողջական պահանջարկի աճ այդ տարիներին արձանագրվել է, այն ավելի շուտ հետհիպերինֆլյացիոն, սաղմնային վիճակում գտվող շուկայական համակարգում տեղի ունեցող կառուցվածքային տեղաշարժերի հետևանք էր, երբ յուրաքանչյուր փոքր ցնցում ուղղակի սրում էր բացասական սպասումները՝ հանգեցնելով փոխարժեքի տատանումների, հետևաբար և սղաճի: Այդպիսով մինչև 1998 թվականը գների աճ է արձանագրվել տնտեսության բոլոր ճյուղերում:

Պատկերը որոշակիորեն փոխվում է 1998 թվականից սկսած՝ շնորհիվ արդեն հաստատված կայուն մակրոտնտեսական միջավայրի, որի պայմաններում քիչ թե շատ հնարավոր է դառնում տնտեսական զարգացումների բնականոն ընթացքը. կարճաժամկետ

հատվածում գների վարքագիծը պայամանավորող հիմնական գործոնը դառնում է ամբողջական պահանջարկը:

Փորձենք վերլուծել 1998-2001 թվականներին ամբողջական պահանջարկի դրսևորումները:

1998 թվականին արձանագրվեցին առաջին խորը դեֆլյացիոն դրսևորումները ոչ միայն գյուղատնտեսությունում, այլև ամբողջ տնտեսությունում, որը որոշակիորեն պայմանավորված էր ամբողջական պահանաջարկի վրա արտաքին հատվածի և 1997 թվականին իրականացված մակրոտնտեսական քաղաքականությունների ազդեցություններով:

Փորձենք պարզաբանել. 1996-1997 թվականներին բավականին խիստ էր կապը փոխարժեքի և սղաճի միջև, որը հիմնականում բացատրվում էր սպառողական զամբյուղում ներմուծվող ապրանքների մեծ կշռով: Այդ տարիներին փոխարժեքի ցանկացած տատանում կամ սպասում ուղղակիորեն արտահյատվում էր ապրանքային շուկայում գների համապատասխան փոփոխությամբ: ԵՎ 1996 թվականին կենտրոնական բանկի կողմից փոխարժեքի լողացող ռեժիմի վերաբերյալ հայտարարությունը (ինչը լրիվ արդարացված էր) չէր կարող չհանգեցնել փոխարժեքի արժեզրկման սպասումների: 1996 թվականի հուլիսից մինչև 1997 թվականի հունիս ընկած ժամանակահատվածում փոխարժեքը արժեզրկվեց 25%-ով: Կառավարությունը իր հերթին 1997 թվականին բազմիցս հայտարարել էր որոշ կարգավորվող գների և սակագների բարձրացման մասին, ինչը ևս առաջացրել էր ինֆլյացիոն սպասումներ: Բացի այդ, 1997 թվականին իրականացվեցին հարկային վարչարարության բարելավմանը ուղղված քայլեր, ինչը նույնպես հանգեցրեց հարկվող ապրանքների գների աճի: Մյուս կողմից դրամական բազայի փաստացի աճը կազմեց 22.5% ծրագրված 12.1% փոխարեն: Այսպիսով 1997 թվականին գրացվեց սղաճի ծրագրային մակարդակի գերազանցում. նախատեսված10% փոխարեն այն կազմեց 21.9%: Նույն տարում գրանցվեց սպասվածից ցածր տնտեսական աճ՝ 103.1%, նախատեսված106% փոխարեն, ինչը հիմք հանդիսացավ ենթադրելու, որ սղաճի արագացումը կարող է ունենալ միջին ժամկետ միտումներ և ուղեկցվել ցածր տնտեսական աճով: Այդ իսկ պատճառով ձեռնարկվեցին որոշակի միջոցառումներ սղաճի մակարդակը զսպելու ուղղությամբ, որը բնականաբար զսպեց ամբողջական պահանջարկի ընդլայնումը գալիք ժամանակահատվածում: Այդ միջոցառումների շրջանակում վերանայվեց ԿԲ կողմից բյուջեի պակասուրդի ֆինանսավորման ծավալները, իսկ կառավարությունը բյուջատային խնայողությունների ձևավորմանն ուղղված քայլեր կատարեց: Արդյունքում կառավարությունը մարեց 11 մլրդ դրամ ծավալով ԿԲ կողմից տրամադրված վարկ, որը հանգեցրեց դրամի առաջարկի կտրուկ և բավականին խոշորածավալ կրճատման, ինչը մեր կարծաքով արտահայտվեց ամբողջական պահանջարկի միջին ժամկետ միտումների վրա:

Հաջորդ կարևոր գործոնը, որը զսպեց ամբողջական պահանջարկի ընդլայնումը 1998 թվականին մասնավորապես և որոշակիորեն հաջորդող տարիներին դա ռուսական ճգնաժամն էր: Ճգնաժամի արդյունքում զգալիորեն նվազեցին Ռուսաստանից Հայաստան տրանսֆերտների և գործոնային եկամուտները մուտքերը (մասնավորապես 1999 թվականին),

նվազեց հայկական ապրանքների Ռուսաստան արտահանման հնարավորությունը, առաջացան բացասական սպասումներ նեքին ֆինանսական շուկայում ճգնաժամային դրսևորումների առնչությամբ, որից ապահովագրվելու նպատակով իրականցվեց զգուշավոր դրամավարկային քաղաքականություն՝ զսպելով դրամի առաջարկի, հետևաբար և ամբողջական պահանջարկի հնարավոր ընլայնումը:

Ամբողջական պահանջարկի ընդլայնման համար անբարենպաստ պայմաններ ձևավորվեցին նաև 1999 թվականին: Տարեսկիզբը աչքի ընկավ արտարժույթի նկատմամբ պահանջարկի կտրուկ աճով: Դա հիմնականում հետևանք էր Ռուսական ճգնաժամի և էներգետիկայի ոլորտին առնչվող որոշակի ֆինանսական հոսքերի: Կրկին ֆիանանսական շուկայում ցնցուցմներից խուսափելու նպատակով կենտրոնական բանկը ծրագրվածից շատ իրականացրեց արտարժույթի վաճառք և հակադարձ ռեպո գործառնություններ՝ կտրուկ նվազեցնելով դրամի առաջարկը :

Հարկաբյուջետային քաղաքականության իրականացման բնագավառում առկա մի շարք խնդիրների նույնիսկ մակերեսային ուուսմնասիրումը ուղղակիորեն մատանշում է ամբողջական պահանջարկի վրա դրանց թողած բացասական ազդեցությունը:

Այսպես, 1999 թվականից սկսած մինչև 2001 թվականը հարկաբյուջետյին քաղաքականությանը բնորոշ է եղել ծախսերի թերկատարումները, որոնք չէին կարող չանդրադառնալ պահանջարկի վրա: Սակայն այս գործոնի ազդեցությունը չի սահմանափակվել միայն այս ուղղությամբ: Ծախսերի թերկատարումները հիմնականում հետևանք են եղել ընթացիկ եկամուտների թերհավաքագրումների, այսինքն, եթե տեղի է ունեցել վարչարարության թուլացում կարելի է ենթադրել, որ այն նպաստել է եկամուտների բևեռացման խորացմանը, որը բնականաբար նախ և առաջ պետք է արտահայտվեր լայն սպառման (կամ ցածր դասի) ապրանքատեսակների՝ գյուղատնտեսական մթերքների նկատմամբ պահանջարկի զսպմամբ:

Կառավարության կողմից կառուցվածքային բարեփոխումների իրականացման որոշակի ձգձգումները ևս ունեցան երկկողմ բացասական ազդեցություն: Բացի բուն բարեփոխումների ձգձգումներից, որ խոչընդոտել են ընդհանուր տնտեսական զարգացումներին, ձգձգումները պարբերաբար հանգեցրել են բյուջերի դեֆիցիտի արտաքին ֆինանսավորման միջոցների հետաձգման, որը իր հերթին հանգեցրել է ամբողջական պահանջարկի զսպման:

Կառուցվածքային խնդիրներից կուզենայինք առանձնացնել աշխատուժի շուկայի, աշխատավարձի վրա կառավարության քաղաքականության ունեցած ուղղակի ներգործությունը: Մասնավորապես պատական ծառայողների աշխատավարձի ցածր մակարդակը որոշակի սահմանափակում է մտցնում աշխատուժի շուկայում, որը հանգեցնում է տնտեսությունում եկամուտների անհամամասնական առաջնային բաշխման:

Քաղաքականությունների կոորդինացման բնագավառում առկա խնդիրները՝ մասնավորապես բյուջեի անխուսափելի վերանայումների ձգձգումները, բյուջեի կանխիկ հոսքերի ծրագրավորման ցածր որակը որոշակիորեն խոչնդոտել են դրամավարկային քաղաքականության արդյունավետ իրագործումը՝ հնարավորության չտալով նախապես

կարծիք կազմել ամբողջական պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունների վերաբերյալ:

Ամբողջական պահանջարկի վրա թողած մակրոտնտեսական քաղաքականության ազդեցության հետ զուգահեռ կարևորվում է տնտեսական համակարգում առկա կառուցվածքային խնդիրները, որոնք զսպում են պահանջարկի աճը այնպիսի ապրանքատեսակների նկատմամբ, ինչպիսք են գյուղտնտեսական մթերքները: Այդ խնդիրներից կուզենայինք առանձնացնել եկամուտների բևեռացումը: Եկամուտների բևեռացման պատճառով անցած չորս տարիների ընթացքում ՀՆԱ բավականին բարձր աճի տեմպը, որը մյուս կողմից նշանակում է ամբողջական պահանջարկի աճ, չի արտահայտվել սպառողական ապրանքների նկատմամբ պահանջարկի աճով: Ինչ վերաբերում է գյուղմթերքների նկատամաբ պահանջարկին, ապա այն նույնպես պետք է աճեր, եթե աճեր սպառողական պահանջարկը՝ թեկուզ միայն վերամշակող և սննդի արդյունաբերության կողմից ներկայացված պահանաջարկի հաշվին:

Այսպիսով մինչև 2000 թվականը պահանջարկի աճը որոշակիորեն զսպվել է, որը արտահայտվել է գյուղատնտեսության գների մակարդակի անկմամբ:

Գյուղատնտեսական ապրանքների գների վրա ազդեցություն են ունեցել նաև որոշ ապրատնքատեսակների գների փոփոխությունը: Օրինակ ծխախոտի և բենզինի գների աճը, որը տեղի է ունեցել վերջին տարիներին և մասնավորապես 1999 թվականի ամռանը (երբ բարձրացվեցին այս ապրանքատեսակների վրա կիրառվող անուղղակի հարկերի դրույքաչափերը), հանգեցրեց սպառողների բյուջետային սահմանափակման խստացման, որը արտահայտվեց գյուղատնտեսական մթերքների նկատմամբ պահանջարկի անկմամբ: Հակառակը կարելի է արձանագրել 2001 թվականին, երբ բենզինի գների 14.2 % անկմանը զուգահեռ արձանագրվեց գյուղմթերքների գների 9.9% աճ:

2001 թվականին ընդհանուր տնտեսական միջավայրը, իրականացված մակրոտնտեսական քաղաքականությունը նպաստեցին ամբողջական պահանջարկի ընդլայնմանը, որը արտահայտվեց թե՛ բարձր տնտեսական աճով, թե՛ սղաճով:

Գյուղատնտեսության հնարավոր զարգացումները տեսանելի ապագայում

Այժմ, ՀՀ տնտեսության հետագա զարգացումները դիտարկելով այլ հավասար պայմանների ներքո, մասնավորապես բացառելով տարածաշրջանում տնտեսական, քաղաքական իրավիճակի որակական փոփոխությունները՝ փորձենք դատողություններ անել ճյուղի հնարավոր զարգացումների վերաբերյալ:

Ինչպես պարզվեց, վերջին տաս տարիներին գյուղատնտեսության զարգացումները մեծապես պայմանավորված են եղել ամբողջական պահանաջարկի զարգացումներով և տնտեսական համակարգի կառուցվածքային խնդիրներով: Եթե 90-ականների առաջին կեսերին գյուղատնտեսության աճի տեմպերը անհամեմատ բարձր էին տնտեսության միջին

տեմպերից՝ ճյուղի թողարկման նկատմամբ պահանջարկի աճի և ճյուղի տնտեսական կապերի տեսանկյունից համեմատական բարձր պաշտպանվածության հաշվին, ապա 90-ականների երկրորդ կեսին պատկերը փոխվեց կրկին պահանջարկի զարգացումների ներքո: Ճյուղի թողարկման ծավալների աճի տեմպը նվազեց: Ավելի բարձր աճի տեմպ կարող էր գրանցվել միայն լրացուցիչ ներդրումների արդյունքում: Սակայն դրա նպատակահարմարությունը ըստ էության չառաջացավ, քանի որ պահանջարկը գյուղմթերքների նկատմամբ հարաբերականորն քիչ աճեց:

Մեր կարծիքով ապագայում նույնպես զարգացումների ուղղությունները, բնույթը հիմնականում պայմանավորված կլինեն այդ նույն երկու գործոններով: Հետևաբար գյուղատնտեսության հնարավոր զարգացումների վերաբերյալ մեր դատողությունները փորձենք ածանցել ամբողջական կամ ճյուղի պահանջարկի և տնտեսական համակարգի կառուցվածքային զարգացումներով, որոնք ըստ էության կարող են դրսևորվել հետևյալ հնարավոր ուղղություններով.

- միջին ժամկետ հատվածում նշանակալի կառուցվածքային տեղաշարժեր չեն արձանագրվում, շարունակվում են դրսևորվել վերջին չորս տարիներին ձևավորված միտումները
- անկախ պահանջարկի որակական, նշանակալի փոփոխություններից՝ ուղղահայաց ինտեգրացիայի, ներմուծման փոխարինիչների արտադրության ընդլայնման արդյունքում ճյուղում տեղի են ունենում կառուցվածքային տեղաշարժեր. աճում են ներդրումների ծավալները՝ մասնավորապես կոնկրետ ենթաճյուղերում (ջերմոցային տնտեսություններ, մրգի այգիներ), բարձրանում է արտադրության կազմակերպման արդյունավետությունը
- իրականացվող կառուցվածքային բարեփոխումների, մակրոտնտեսական քաղաքականությունների արդյունավետ կոորդինացման արդյունքում պահանջարկի ընդլայնման զսպում չի արձանագրվում, որի հետևանքով դադարում կամ կրճատվում են գյուղատնտեսության գների հարաբերական անկումը, խրախուսվում և բարելավվում է ներդրումային միջավայրը

Քննարկենք նշված սցենարներից յուրաքանչյուրի հանդես գալու պայմանները, հավանականությունը և հնարավոր հետևանքները:

Դեպքերի նման զարգացումը դժվար թե հանգեցնի որակական փոփոխությունների: Քանի որ տնտեսությունում գործազրկության բարձր մակարդակի պայմաններում գյուղատնտեսությունում զբաղվածները, որոնք կազմում են ընդհանուր զբաղվածների 41% և հիմնականում հանդիսանում են նաև հողատերեր, դժվար թե կարողանան զբաղվածության այլ ձև ձեռք բերել: Ճյուղը, ստիպված լինելով ներկայիս հզորությունների պայմաններում գործելու, թողարկման ծավալների շոշափելի աճ չի ունենա: Ինչ վերաբերում է գներին, ապա հարաբերական անկումը հավանաբար կշարունակվի, սակայն ավելի ցածր տեմպերով:

Զարգացումների երկրորդ հնարավոր տարբերակը մեր կարծիքով ամենահավանականն է, որը և ակնկալում ենք մոտ ապագայում: Մինչև վերջին տարիները արտադրողականության, կապիտալի հետ գնման, ներդրումային միջավայրի, պահանջարկի տեսանկյունից գյուղատնտեսությունը զիջում էր տնտեսության մյուս ճյուղերին: Այդ մասին են վկայում ճյուղերում զարգացումները բնութագրող որոշ ցուցնիշներ (տես աղյուսակ 1, գրաֆիկ 3): Մասնավորապես տնտեսության մյուս ճյուղերում ներդրումները զգալիորեն գերակշռել են:

Ներդրումների կշիռները հիմնական կապիտալում ըստ տնտեսության ճյուղերի
(աղյուսակ 1)

	1995	1996	1997	1998	1999	2000
Ընդամենը, որից	*100*	*100*	*100*	*100*	*100*	*100*
արդյունաբերություն	*27.6*	*23.8*	*17.5*	*11.8*	*8.6*	*10.4*
գյուղատնտեսություն	***8.1***	***4.3***	***4.1***	***8.3***	***13.4***	***6.5***
կրանսպորտ և կապ	*4.6*	*35.7*	*40.8*	*16.9*	*21.0*	*36.2*
շինարարություն	*0.3*	*0.0*	*0.0*	*0.0*	*0.1*	*0.0*
առևտուր	*0.0*	*0.0*	*2.1*	*3.7*	*3.3*	*3.0*
բնակարանային տնտեսություն	*46.8*	*23.0*	*28.0*	*39.3*	*33.1*	*20.9*
այլ	*12.7*	*13.1*	*7.5*	*20.1*	*20.6*	*22.9*

Սակայն այդ միտումը երկար շարունակվել չի կարող, և այստեղ խնդիրը կրկին կառուցվածքային բնույթի է: Մանրամասնենք. տնտեսության որոշ, մինչև օրս համեմատաբար շահութաբեր ճյուղերի, մասնավորապես ծառայությունների թողարկման նկատմամբ պահանջարկը այնպիսի որոկական փոփոխություններ, ինչպես մինչև 2000-2001 թվականը արձանագրվեց, չի կարող տեղի ունենալ: Նախ այդ ժամանակահատվածում ընթանում էր սպառողի համար նոր, շուկայում մինչ այդ բացակայած ապրանքների և ծառայությունների մուտք և ճյուղի թողարկման, ճյուղի նկատմամբ պահանջարկի աճը մեծապես այդ երևույթի հետևանք էր: Իսկ ներկայումս բնակչության միջին խավի բացակայության, եկամուտների բևեռացման պայմաններում ամբողջական պահանջարկի կառուցվածքում զգալի տեղաշարժեր ակնկալելը բավարար հիմքեր չունի: Մինչ այժմ հարաբերականորեն «հաջողված» ճյուղի արտադրանքի նկատմամբ պահանջարկը նույն տեպերով չի կարող աճել, այն առավելագույնը կարող է մոտ լինել ամբողջական պահանջարկի աճին: Իսկ մյուս կողմից նույն եկամուտների բևեռացվածութունը խոսում է այն մասին, որ նույն «հաջողված» ճյուղերում ներդրումներ կատարած տնտեսվարողների մոտ կապիտալի բավականին մեծ կենտրոնացում կարող է լինել, որը եթե ներդրվի նույն ճյուղում, այս պահանջարկի պայմաններում արդեն ուղղակի կհանգեցնի շահութաբերության նվազման: Հետևաբար (եթե այլ հավասար պայմանների ներքո տեսնում ենք նաև արտահանման մինչ այժմ արձանագրված միտումների պահպանումը) գործարարի համար արդարցված կլինի ավելցուկ միջոցները ներդնել այլ ոլորտներում և անցում կատարել բիզնեսի այլ մակարդակ: Տեղի

կունենա ուղղահայաց ինտեգրացիա, որը կբնութագրվի ավելի երակարաժամկետ ներդրումներով: Այս հարթությունում գյուղատնտեսությունը շնորհիվ իր՝ վերը բազմիցս թվարկած առավելությունների, բավականին հարմար ոլորտ է:

Ի՞նչ տեղի կունենա այս դեպքում: Ներդրումների աճին զուգահեռ կբարձրանա արտադրության կազմակերպման արդյունավետությունը, որը գոնե միջին ժամկետում կուղեկցվի գործազրկության աճով: Թողարկման ծավալները կաճեն հիմնականում նոր արդյունաբերության կողմից առաջացած պահանջարկի հաշվին:

Գների առումով՝ հավանաբար կարճաժամկետ տատանումները, որպես առաջարկի կարճաժամկետ տատատնումների հետևանք, կնվազեն, քանի որ ներդրումների շնորհիվ արտադրության գործընթացը առավել պաշտպանված կլինի մասնավորապես բնկալիմայական գործոնից, կաճեն թունաքիմիկատների, պարարտանյութերի կիրառումը:

Գործունեության ընթացքում բախվելով գների սեզոնային տատանումներին՝ հնարավոր է, որ նույն ներդրողները ձեռնամուխ լինեն պահեստային տնտեսությունների կազմակերպմանը, որ արդեն կարող է խթան հանդիսանալ թողարկման ծավալների աճի և նպաստի ճյուղի գների կայունացմանը:

Երրորդ տարբերակը հնարավոր լավագույնն է: Այն ըստ էության ենթադրում է նախորդ տարբերակում նկարագրված զարգացումները, գումարած կառուցվածքային բարեփոխումների, մակրոտնտեսական քաղաքականությունների, Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի հաջող ընթացքով պայմանավորված, ճյուղի համար բարենպաստ պահանջարկի կառուցվածքային զարգացումները: Այս դեպքում ճյուղի դրական զարգացումները նախորդ տարբերակից կտարբերվեն իրենց թափով:

Ամփոփում

Նյութում կատարված դատողությունները և եզրակացությունները ցավոք ճշգրիտ հիմնավորվածություններով հարուստ չեն, որի հիմնական պատճառը առկա վիճակագրության անբավարարությունն է: Մասնավորապես գյուղմթերքների շուկաների գնագոյացման վերաբերյալ առաջարկվող հիպոթեզները, որը կարելի է ասել նյութի հիմնական նպատակն է, վիճակագրության առումով հիմնված է գյուղատնտեսության ենթաճյուղերի հողատարածքների, թողարկման ծավալների և գների ումնասիրության վրա միայն: Այնուհանդերձ ձևակերպված հիպոթեզները նպաստեցին գյուղատնտեսությունում գնագոյացման առանձնահատկությունները ուսումնասիրող վիճակագրական հարցման աշխատանքների կազմակերպմանը և հարցման արդյունքներն արդեն կօգտագործվեն առաջարկված հիպոթեզների ստուգման համար:

Դրամավարկային քաղաքականության տեսանկյունից այս նյութի շրջանակներում հարկ ենք համարում ընդգծել հետևյալը.

- ընդհանուր առմամբ (չմանրամասնելով ըստ ապրանքախմբերի, որը ներկայացված է նյութում) գյուղատնտեսությունում գնագոյացումը կատարվում է մրցակցային պայմաններում
- ամբողջական պահանջարկը գյուղատնտեսության զարգացումների համար ընդհանրապես և մասնավորպես այդ ճյուղի գների առումով որոշիչ դեր ունի
- առաջարկի էլաստիկությունը գնից խիստ փոքր է
- միջին ժամկետ հատվածում գյուղատնտեսության ամենահավանական զարգացումը տեղի կունենա միջճյուղային ինտեգրացիայի արդյունքում՝ մասնավորապես ուղղահայաց ինտեգրացիայի, որոշ վերամշակված սննդամթերքների գծով ներմուծման փոխարինման և վերամշակող (մասնավորապես սննդի) արդյունաբերության կողմից գյուղմթերքների նկատմամբ պահանջակի աճի հաշվին
- այս զարգացումների արդյունքում կանխատեսում ենք գների սեզոնային տատանումների չափի նվազում և հարաբերական գների համեմատական կայունացում

Գյուղատնտեսությունում ամբողջական պահանջարկի կարևորությունը և մրցակցային պայմաններում գնագոյացումը նախ և առաջ նշանակում է, որ մասնավորապես այս ոլորտում պահանջարկի կառավարումը արդյունավետ է գների կառավարման առումով: Ավելին, գներից առաջարկի ցածր էլաստիկության պայմաններում (նամանավանդ կարճաժամկետ հատվածում) պահանջարկի դերը դառնում է որոշիչ: Այս պայմաններում հարաբերական գների կայունացման առումով դրամավարկային քաղաքականությունը առանձնահատուկ միջոցառումներ ձեռնարկել չի կարող: Միջին ժամկետ հատվածում դրամավարկային քաղաքականությունը ընդամենը պետք է հետամուտ լինի ամբողջական պահանջարկի սահուն կառավարմանը: Ինչ վերաբերվում է տարվա ընթացքում գյուղմթերքների գների սեզոնային տատանումներին, ապա այս առնչությամբ հավանաբար արդարացված կլիներ ամռան ամիսներին ունենալ ամբողջական պահանջարկի համեմատաբար մեծ ծավալներ՝ գյուղմթերքների գների կտրուկ նվազումը մեղմելու նպատակով: